ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 նոյեմբերի 2013թ. թիվ 268-Ա

Լ.ՄԱԹՈՍՅԱՆԻՆ ՊԱՇՏՈՆՈՒՄ
ՎԵՐԱՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետի «ա» ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. մայիսի 6-ի N 575-Ն որոշումը՝

Որոշում եմ.

1. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակի Դ.Տեր-Սիմոնյանի անվան N 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Լուսինե Գրիշի Մաթոսյանին վերանշանակել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակի Դ.Տեր-Սիմոնյանի անվան N 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն:

2. Լ.Մաթոսյանի հետ կնքված աշխատանքային պայմանագրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կատարել փոփոխություն:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2013թ. նոյեմբերի 5
ք.Վանաձոր